

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԼՐԱԴՈՒ

(30-Դ ՏԱՐԻ)

ՆԵՐՎԱՅ 1902 ԹԻՖԼԻՍԻՆ

«ՄՇԱԿ» ՀՐԱՍԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ամեն օր, բացի տօներէն յաջորդող օրերէն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ. «Մշակ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ եւ տասն ամսականը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. եւ մի ամսականը՝ 1 ռուբլի:
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակ» գրվել կարելի է ԽՍՀՄ-ում (Բազմաբնակային Բարձրագույն փողոցների անկիւն), իսկ ԲԱՅԻՆՈՒՄ՝ Ն. Դաւթեանի մօտ:
Կայտարարութեան ուրիշ քաղաքներէն «Մշակ» գրվելու համար եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է գրել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա.Պ.Ս.Ի.Կ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Արագ եւ Սպիտակի ինքնակազմակերպութիւնը, Եւրոպայի Առեւտրական եւ Մուտքի Հայրապետեան Գաղափարները, յայտնում են՝ առաջինը իր որդու, երկրորդը իր ամուսնուհի, երրորդը իր հօր եւ չորրորդը իր անեղն:

ԱՒԵՏԻՍ ԽՕԶԱՍԻՐԵԱՆՅԻ

մահը, որ տեղի ունեցաւ Թիֆլիսում Հոգեհոգիար տեղի կոնսնայ յունկարի 7-ին, երեկոյեան 6½ ժամին հանգուցեալի բնակարանում, Բէրուտովսկայ փողոց, տուն Գօնիկի, № 19: Յուշարկաւորութիւնը յունկարի 8-ին գէպի Մոդիուս. Գէորգ եղբորդին, առաւօտեան 10 ժամին, Թաղումը ինքնակազմակերպութիւնը գերեզմանատանը:

1—1

ԲՈՎԱՆԻՍԻՏԻՒՆ

Մեր թղթակցներէն. — ՆԵՐՖԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տարեկան խմբագր. Մեր ներքին կեանքը 1901 թւին. Վրաց թատրոն. Նամակ Բազմաբնակային Բարձրագույն փողոցի. — ԱՐՏԱՍԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ՀԵՆՈՒԳԻՐԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ծնունդ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾՆՈՒՆԴ

Իւլիս Հարսի

...եւ ցորտ ձմարն, կէս գիշերին փթեց մի ծաղիկ...

Ծողովրդական ծննդատու:

...Ծնունդ. նուիրական գիշեր, մեծ հրաշալիքի գիշեր. Ահա առաջնական աշխարհներ են բացուում մեր առաջ եւ մենք քողազուրկ աչքերով նայում ենք դէպի նոր թաղաւորութիւններ, դէպի կախարդական երկրներ:

Ծնունդ եւ առաջնական Սա մեր մարդը այնպէս անուրձեղի կերպով է շարկապիլել, որ կարծես մի վաղեմի, հնադարեան ժամանակների լինի. եւ մենք չենք կարող կասկածել, որ այն բոլոր տրամաբարութիւնները եւ զգացումները, որոնք այս գիշեր պաշարում են մեզ ու մի ընդհանուր, փոխանցելի ցնծութեամբ ամբողջ երկրի հեղեղում—հեռու անցեալներում, ձմեռային արեւադարձին՝ նոյնպէս համակել են մեր ժողովրդի հոգին:

Առաջնական երազը այն վարդի, որ ցորտ ձմարն փթիլներ է արձակում, սրբազան գիշերվայ վաղեմի եւ յուրանական երազն է: Բայց միթէ այս վարդը միայն մի առաջնական, մի ցնորամիտ երազ է: Մարդկութիւնը միթէ կարող կը լինէր տօնել ծնունդը իրեւ բարձրագույն ուրախութեան եւ ամենապայծառ լոյսի մի հանդէս, եթէ այս գիշերվայ հրաշքը միայն հրաշք լինէր, մի անկարելիութիւն. միթէ նա

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՆ

Մեզ համար հաճելի է մեր առաջին խօսքը ուղղել մեր աշխատակիցներին, գաւառական մեր թղթակիցներին, մեզ հետ միասին «Մշակ» մէջ գործողներին: Մենք

աւելի շուտ ուրախ չէ այն կենդանի գիտակցութեամբ, որ այս առաջադր բոլոր իրողութիւնների իրողութիւնն է եւ որ ձմեռնային ձիւնի միջից փթթող վարդը բոլոր ճշմարտութիւնների ճշմարտութիւնն է, որ Քրիստոսի, Մեհայի ճշմարտութիւնն է աւետարտ:

Տարվայ ամենակերպար, ամենամոլեթ ու ամենախոր գիշերն է այս, երբ յանկարծ ծննդեան տօնածառի լոյսը խաղաղ եւ հանդարտ կերպով բացվում է: Անվերջ խաւարի մէջ մի բոլոր բռնկող կայծ, մի կեպիլ բոց: Սա ուրիշ բան չէ, բայց եթէ ձիւնի եւ սառցի միասնական դաշտերում փթթող վարդը:

Մեռած եւ ընդարմացած է բնութիւնը: Նրա խոր հանգստի ժամանակն է՝ Անկենդան է նոյն իսկ ջուրը, չէ լուծւում ալիքների միմեծ: Բայց հէնց այս ամենամոլեթ գիշերին բացվում է մարդու ծննդեան աչքերը. նա նայում, սեւեռում է իր հայեացքը դէպի երկրի ծոցը եւ մի երանաւէտ զգացմունք պաշարում է նրան—այս երկրի մեռած չէ, կենդանի բոցը առկայծվում է անընդհատ ձիւնի սաւանի տակ ձիւն է, ոչ ոք չէ կարող այս լոյսը կենդանի աչքերով տեսնել, բայց եւ այնպէս դա գոյութիւն ունի եւ եթէ դու մի բարի աստղի տակ ես ծնված՝ այն ժամանակ կը տեսնես ծննդեան վարդի բոցը: Բայց ժամը Ամեն մէկը մեզանից ապրում է այն ժամը՝ երբ նա այս ձմեռնային բնութեան նման անուր է եւ անկենդան. բայց մեծամասնութիւնը պիտի չէ դնում այն սրբազան գիշերվայ առաջադր, որը հոգու լոյսից է պատմում, այն լոյսից, որ մեռած մարմնի մէջ շարունակում է ապրել, բոցը: Ծնունդի պօրժիմը վերջին եւ ամենախոր պօրժիմն է, մի պօրժիմ, որ բոլոր միաները

յայտնում ենք մեր շնորհակալութիւնը նրանց աշխատակիցութեան համար եւ նրանց դէպի «Մշակ» ունեցած ջերմ համակցութեան համար:

«Մշակ» միշտ աշխատել է, որքան կարելի է, լիակատար կերպով ներկայացնել գաւառի կեանքը եւ այդ իր ցանկութիւնը նա կարողացել է իրադրծել մեր քաղաքներում եւ գիւղերում ցրված բազմաթիւ թղթակիցների շնորհիւ: Ամեն տարի աւելանում է թղթակիցների թիւը, եւ այն գիւղերը, որոնց անունները երբեք չէին յիշվել լրագրութեան մէջ, սկսում են հաշիւ տալ իրանց ցաւ ու հոգի, իրանց կարիքների մասին եւ նրանց ներկայացնել հասարակական քննադատութեան եւ դատաստանին:

Մենք, որ շատ մեծ գին ենք տալիս գաւառի կեանքին, յաճախ ստիպված ենք լինում կրճատել մեզ ուղարկված թղթակցութիւնները եւ նրանցից մի քանիսը չը տպագրել: Այդ առաջ է դալիս նրանից, որ լրագիրը աշխատում է համապատասխան պահպանել եւ փոքր ամիսների մէջ շատ տեղեկութիւններ հաղորդել. միւս կողմից նա չէ ցանկանում անթիւ կրկնութիւններ անել: Մենք օրինակ ստացել ենք բազմաթիւ նամակների գիւղերից տեղական երէցփոխների եւ քահանաների անհոգութեան եւ պարսաւելի գործունէութեան մասին: Մանրամասն տպագրել բոլոր անկարելի է: Երեւոյթ տարածված է եւ ընդհանուր է: Մենք արձանագրում ենք բնութագրեր եւ նուիրում ենք լրագրի մէջ ընդհանուր յօդուածներ տիրող հասարակական չարիքի մասին:

Ցանկալի է, որ մեր գաւառական թղթակիցը աւելի լայն ծրագրով հետեւի իր շրջապատող կեանքին եւ ներկայացնէր մեզ նաեւ ծխական համայնքի հետաքրքրութիւնից դուրս երեւոյթների մասին տեղեկութիւններ, որպէս զի իրական կեանքը արձանագրվել իր բոլոր կարեւոր կողմերով: Եթէ գաւառի զարգացմանը մենք ամենքս մեծ նշանակութիւն ենք տալիս, անհրաժեշտ է, որ գաւառի հարցերը մեր քննութեան մշտական առարկաներ լինեն: Այդ

իր մէջն է ամփոփում, որ մեռնող է մատակարարում բոլոր կրօններին եւ գիտութիւններին եւ նա, ով որ անգամահատող զանալով պեղում է մարմինը եւ կեանքի բոցն է որոնում, նման է այն մասնակցին, որ հրաշքի գիշերը դուրս է ցատկում ձիւնի չերտերում վարդը փնտռելու: Մենք խօսում ենք այժմ հնէգիւլի պահպանութիւնից՝ իբրեւ գոյութեան ամենավերջին եւ բարձրագոյն օրէնքից. բայց սա ուրիշ բան չէ, եթէ ոչ հին ծնունդի պատգամը—լոյսի, կեանքի եւ մահուանից անվերջ փնտրող հոգու անանցանելիութիւնը: Մաքր այն տարրերից շարժում է, որով մարդկութիւնը անդադար խաղում է, նոյնն է մնացել. մենք միայն պատկերներ ենք փոխել: Նիւթը աշխարհի սկզբնական էութիւնն է—այս էր նախնայեալ դարի գաւառները. ոյժն է սկզբնական—այժմ այս ձայնն է հնչում բնագիտութեան բանական Մենք միայն խօսքեր ենք փոխում եւ ինչ որ մի ժամանակ կոչվում էր հոգի, աստուած, գաղափար—այժմ անուանում ենք շարժում, ոյժ, էնէրգիա. ինչ որ երբէ մարմին եւ հոգի էր կոչվում՝ այժմ նիւթ եւ ոյժ:

Բայց ծննդեան զանգալները ղողանջում են մեր շուրջ եւ նրանց ձայնը խաղաղութիւնն է, ուրախութիւն. նրանք հնչում եւ փառաբանում են հին եւ խորհրդաւոր երգը Քրիստոսի առաջնական մահին—այն Աստուածը, որ այս գիշեր մարդ դարձաւ, այն հոգին, որ մարմին առաւ: Ինչու էք վիճում եւ կուրծք թէ նիւթից է առաջացել հոգին, թէ հոգու նիւթը, թէ աշխարհը նիւթ է թէ ոյժ: Թափանցեցէ ձեր մտածողութեան պատրանքը եւ կը տեսնէք, որ դա միայն խաղ է, բաների չափաւոր: Ծննդեան զանգալները հնչում են վարդապետութիւնը այն

գործին կարող են նպաստել մեր գաւառներում ցրված խաղիկներն ոյժերը: Թող իւրաքանչիւրը արձանագրէ իր շրջանի կեանքի էական երեւոյթները: Նրանց համագումարը կը տայ մեզ մեր երկրի կեանքի նկարագիրը: Իսկ երբ մենք կը ձանաչենք մեր երկրը եւ նրա ժողովրդին, այն ժամանակ մեզ համար հեշտացրած կը լինի օգնութեան միջոցներ մշակելու գործը: Գործենք միասին:

ՆԵՐՖԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵՄՈՒՏԻ ԽՈՂՆԵՐ

III

Եւրոպայում գրական մանկութիւնը անցողական է. այնտեղ ճգնաժամն ինչքան էլ ուժեղ լինի, այնու ամենայնիւ պատուարված է մասամբ հին հարստութեան շտեմարաններով եւ մասամբ մի քանի նշանաւոր անուններով, որոնք թէեւ իրանց «վերջալոյս» են ապրում՝ յամենայն դէպս գոնէ դեռ կենդանի են: Դրանցից դէպի հայկական խեղճուկ գրականութեան անապատը, որի առաջ եւրոպական գրականութիւնը իր անկման ծայրայեղ վիճակում անգամ հանդիսանում է իբրեւ մի ձոխ բուրսատան:

Մեզանում գրական դատարկութիւնը եւ աղքատութիւնը վերջերս անասելի չափեր է ընդունել. փոքրիկ աննշան տաղանդներն անգամ հազուադէպ են Թիւրքահայ գրականութեան մասին խօսք անգամ չէ կարող լինել, որովհետեւ խանութիւթ, անբնական եւ դժոխային մի միջավայրում գրականութեան կանոնաւոր բարգաւաճման մասին մտածելը նոյն իսկ անմտութիւն է:

Ռուսահայ գրականութիւնը՝ համեմատաբար լաւ պայմանների մէջ՝ դարձեալ աղքատ է, անբուխալի: Այնպէս որ ամբողջ տարվայ ընթացքում մենք բազմ չունեցանք հայկական գրականութեան մէջ գոնէ փոքր ի շատէ աչքի ընկնող մի երեւոյթի ակնառուութիւնը: Անշարժութիւն եւ անպտղաբերութիւն—անա մեր գրականութեան ժամանակակից պատկերը: Մեր կեանքն էլ անշարժ, լճացած համարել չենք կարող. ընդհանրապէս՝ բաւական չարժու է, յուզիչ եւ երբեմն նոյն իսկ փոթորկալից: Միւս

Աստուծոյ, որ յայտնվեց իբրեւ մարդ, այն հոգու, որ մարմին դարձաւ, որպէս զի մեր աչքերը բացվին եւ ճանաչեն, որ մարդ հէնց իր մէջն է կրում եւ տեսնում Աստուածը, որ նիւթը եւ մարմինը հոգեկան էութիւններ են—ինչ որ նիւթ է միաժամանակ եւ ոյժ, ինչ որ ոյժ՝ միաժամանակ եւ նիւթ:

Տարվայ ամենակերպար, ամենախոր եւ ամենամոլեթ գիշերը վրա հասաւ, այն գիշերը, որ ամենից աւելի մահուան գիշեր է: Բայց հէնց այս ժամը խաւարի մէջ մարդկութիւնը պաշարվում է երանութիւնների արեցութեամբ եւ ամենամոլեթ գիշերը դառնում է ամենալուսաւոր. բնութեան մեծ սուգի գիշերը փոխվում է բարձրագոյն ուրախութեան, որովհետեւ նրա ակնային հնչում են ուրիշ աշխարհների զանգեր, նա լուծւում է հեռուից նոր կեանքի մեղեդին: Անանցանելի, նիւթի եւ ոյժի պահպանութեան, բոլոր իրերի յարատեւ փոփոխութեան եւ վերականգնութեան կախարդական երգն է հնչում բարձրերում:

Ծննդեան տուն. սա ամենալուսաւոր եւ թեան տունն է, Քրիստոս—Մարդու, որի աչքը ոչ մի քողով չէ ծածկված եւ որ ամբողջ աշխարհին իր յաղթական խօսքն է ուղղում—ես ճշմարտութիւնն եմ, ես կենդան եմ եւ ով որ դառնում է ծննդեան մարդ, նա ազատվում է այն զգացմունքից եւ գիտակցութիւնից, որ իր բնութիւնը վերջնական է եւ սահմանափակ, որ իր կեանքը կարճատեւ է եւ անհաստատ. նրան ամեն մի վերջնական անվերջ է լինում եւ նրա հոգին բոլոր սահմանափակումներից վեր է սաւառնում:

Ծննդեան մարդը, որ դարերից ի վեր, թէեւ մի քանի ժամով, արթնանում է մեր մէջ, հին

կողմից հայ ազգը գրական կենսաունակութիւնից զուրկ համարել՝ դարձեալ չենք կարող։ Ուրեմն ինչպիսի բացատրել այն իրողութիւնը, որ կեանքի ազդեցութիւնը, ետեւն չընդունում գրական ասպարէզում յանկարծ տիրում է անգործութիւնը, անկենդան ամայութիւնը։

Անհրաժեշտ է, որ այս երեւոյթը ունի իր խոր եւ ծանրակշիւ պատճառները, որոնց արմատը մեր պատմական-քաղաքական կեանքի բացատրիկ ընթացքում պէտք է որոնել եւ որոնց վրա տարաբաղդաբար անկարող ենք այստեղ կանգ առնել։ Այսպէս միայն կասկած, որ ընդհանրապէս նկատելի եւ շատ քննադատներին արդէն չեն ընդունում մի իրողութիւն է, որ գրականութիւնը նոր սովորաբար ազդեցւոյց ժամանակներից առաջ կամ յետոյ է ծագում։ Այսպէս որ փոթորակից ժամանակների եւ գրականութեան մէջ եղած յարաբերութիւնը երկու կերպ կարելի է ձեւակերպել։ Կան դէպքեր, երբ քաղաքական-հասարակական դրութիւնը լինում արդէն կային, այնքան ձախտագրական է լինում, որ ազգի ամբողջ եռանդը, ստեղծագործող ամբողջ ոյժը անդամաճատում կամ կուլ է տալիս։ Այսպիսի վիճակի մէջ գործնականը գերակշռում է էստէտիկական պահանջին։ Բայց այս տեսակ փոթորակից անցքերին սովորաբար յաջորդում է հարուստ գրականութիւն եւ առհասարակ ձոյն եւ բազմակողմանի կուլտուրա։ Այս երեւոյթի կլասիքական օրինակը թող համարվի հին Յունաստանի վիճակը՝ պարսկական բարբարոս արշաւանքներից առաջ եւ յետոյ։ Յաղթական փառաւոր նուաճումներից յետոյ՝ խաղաղութեան չընթանում ստեղծվեց Պերսիկէսի դարը՝ յունական կուլտուրայի, գիտութեան, գրականութեան եւ արուեստի այս բեղմնավոր ոսկեդարը։ Բայց լինում են եւ դէպքեր, երբ գրականութիւնը նըշանաւոր քաղաքական անցքերից առաջ է ծագում եւ հանդիսանում է իրեն շարժապատճառական մի ուժից փակուոր։ Այսպէս, օրինակ, մեծ յեղափոխութիւնից առաջ ծագվեց Ֆրանսիական գրականութիւնը, «ազատութեան պատերազմներից» առաջ գերմանական կլասիկ գրականութիւնը եւ այլն։

Մեր կեանքում, եթէ կարելի է նոր գրականութեան ծագումն ընդհանր խօսել՝ այն ժամանակ, դա արդէն անցած պէտք է համարել։ Թէ ինչ է լինելու ապագան—սա շատ դժուար լուծելի մի խնդիր է, մասնաւոր որ ներկան մթնոլորտում քողով է ծածկված, այնպէս որ չունենք որ եւ է նախադրեալ, որպէս զի հնարաւոր լինէր գոնէ հաւանական եղրակացութիւններ անել։

Միւթարական այն է, որ մեր նոր գրողներն այն մասը, որ ենթարկվում է եւրոպական գրականութեան անմիջական ազդեցութեան՝ հետզհետէ ձեռք է բերում նոր ոգեւորութիւն, ստեղծագործելու նոր գրողներ։

Միանգամայն համաձայն լինելով էստէտիկա-

գրական մարդն է, որ շարունակ մեր ականջին բաղդաւորութեան երանաւետ առասպելն է մրմնւում եւ թող չէ տալիս հանգստելու մեր մէջ այն հաւատը՝ թէ այս հին երկրի ծոցից մի անգամ մի տոբ, լաւագոյն երկրի է կորզվելու։ Մենք անհամար անգամ է մի մանկական տօն, մի նուիրական հանդէս, որ մեզ բոլորիս երիտասարդացում եւ տեղափոխում է դէպի մանկական աշխարհը, այնպէս որ մենք զգում եւ տպաւորվում ենք ինչպէս երեխաներ։

Մանկական աշխարհ, երեխական գրականութիւն—սա եւ Մոսկով գաղափարների կենսորոնակեցում հէնց այս է, որ եթէ մենք չը լինենք այնպէս, ինչպէս մանուկներ, չենք արժանանալ ոչ գրական տիւն եւ ոչ երկնքին շնանադրութեան ծառը կրում է իր մէջ այն թունաւոր պտուղը, որ մեզ դրախտից վանում եւ կոյր է դարձնում, այնպէս որ մենք կորցնում ենք եւ տեսողութիւնը եւ հաւատը—հեղհեղում ենք նրանց, որոնք ապագայի իղէպական եւ խաղաղութեան թաղաւորութիւններն են խօսում, որովհետեւ սա թւում է մեզ յաւիտեան անիրաւ գործելի մի առասպել։ Բայց մենք շատ թուուշիկ կերպով ենք կարողում ս. գիրքը եւ անուշադիր ենք թողնում թէ որն է իսկապէս ճանաչողութեան այն թունաւոր տեսակը, որ մեր կեանքը դարձնում է մի զարհուրելի կուլի, երկրաշիւ եւ աստիճանական ցանց։

Սա մի մոլոր, բայց խորիմաստ խօսք է, որ փափում է մեզ հին գրականութեան անհաղթելի կերպով ենք կարողում ս. գիրքը եւ անուշադիր ենք թողնում թէ որն է իսկապէս ճանաչողութեան այն թունաւոր տեսակը, որ մեր կեանքը դարձնում է մի զարհուրելի կուլի, երկրաշիւ եւ աստիճանական ցանց։

կան modern աշխարհայեացքի հետ, որ բանաստեղծը ամենից առաջ իր համար է գրում, որովհետեւ «ոչ որ իր համար է գրում, նա գրում է յաւիտեանականութեան համար» (Էմիլ Զոլա)։

Այնուամենայնիւ ցանկալի կը լինէր, որ մեր արուեստագէտների «եւր», անհատականութիւնը եւ րօպական մտքի եւ հայկական սրտի ներդաշնակութիւնից ձուլվէր։

Ամեն մի չըջան, անկասկած, պահանջ ունի իր ոգուն համապատասխանող արուեստագէտի։ Եւ ընդհանրապէս ուժեղ, իղէպական արուեստագէտներ նրանք են, որոնք՝ առանց իր անցան հաւատակարարութիւնը գոհ ելու, մի ներքին արամագրութեամբ, ժամանակի ոգուն եւ համայնական զգացմունքի բովիցն են խլում իրանց ոգեւորութեան առարկան։

Անցեալ փառքի աղօտ բեկորներով լայնել անհար է. կեանքը առաջագիտութիւն է եւ ոչ թէ անշարժութիւն։ Երբ բացակայում է առաջագիտութեան գործնական երակը՝ այն ժամանակ մարդկային ոգուն ոչ մի առանձնապատկութիւն այնքան կենսատու, այնքան փրկարար չէ, որքան հաւատը, վստահութիւնը։ Ինչպէս անհատական, այնպէս էլ ազգային կեանքում հոգուն այս բանաստեղծութիւնը, այս իլլիւզիան է վերականգնում։ Նոր հօրեզմանների ամենաաւարտ գրականութիւնը։

Եւ հաւա նոր տարվայ չէմբին հայ ընթերցողներին ցանկանում ենք այդ անսպաս հաւատքը, իսկ արուեստագէտներին՝ ստեղծագործելու եռանդ։

Վ. Նալբանդեան

ՄԵՐ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔԸ 1901 ԹԻՒՆ

Մեր ներքին կեանքը 1901 թվ. ընթացքում ոչ մի առանձին բեղմնավորութիւն չէ ցոյց տուել, բայց տեղի են ունեցել մի քանի նշանաւոր դէպքեր, որոնց վրա անհարկն է կանգ չառնել։

Առաջին տեղը գրաւում է երկրի մէջ տիրող ֆինանսական եւ տնտեսական տագնապը, որ ամենից շատ իր ազդեցութիւնն ունեցաւ։ Բազուի վրա Ամբողջ տարին Բազուի նաւթարդիւնաբերութիւնը եւ նրա հետ կապված բոլոր ձեռնարկութիւնները ստատապում էին գրաւական մեծ ճգնաժամով, որի սատակութիւնը նաւթարդիւնաբերողները կարծում էին մեղմացնել դժբաղդ բանւորներին գործից, աշխատանքից զրկելով կամ նրանց առճիկները պակասեցնելով։ Բազմաթիւ անակութիւններ տեղի ունեցան, որոնք ազդեցին երկրի ընդհանուր տնտեսական վիճակի վրա։ Այդ ընդհանուր տագնապը, որ յանկարծ պայթեց Բազուի գլը խին, բացատրվում է մի քանի զանազան տեղական պատճառներով։ Տաքնապը հետզհետէ կը վերանայ եւ գործերն իրանց կանոնաւոր ընթացքը կը ստանան, երբ արտաւորութիւնը կը հաւասարվի պահանջին։ Չենք

դարձնում է երկրի տանջանքի մի վայր, նա մեզ մշտապէս բաժանում է աստուածութիւնից։ Որովհետեւ երբ որ մենք բարին եւ չարը տարբերում ենք, դա նշանակում է, որ մենք միմեանցից ասարեւորում ենք նաեւ աստուածալինը եւ մարդկայինը ու մի սահման ենք դրնում վերջականի եւ անվերջի մէջ։ Սրանով արդէն մահն է մուտք գործում աշխարհը, այն մահը, որի մասին այսքան կարող ենք ասել, որ անկարելի է նա կեանք լինի։ Անա այն բոլորը, ինչ որ աշխարհում մեզ մոլոր, խառնաշփոթ, սուրբ եւ վշտալի է թւում, մեր մտածողութեան այս տարբերութիւնների եւ բաժանումների մէջ պէտք է որոնել։ Եւ այն, ինչ որ աւանդվում է մեզ իրեն առնաբարձը եւ ամենապարզ մէջ պէտք է որոնել։ Եւ այն, ինչ որ առնաբարձ ընդհանրակ ենք այս երկուսը միմեանցից տարբերել։ Միայն Բրիտանիան է, որ արտաբար, մեծ մանուկը, որ մաքաւաւորներն եւ մեղաւորներն չըջանում զիմակազերծ է անում ճանաչողութեան ծառի պտուղը եւ բարիի ու չարի գիտութիւնը յայտարարում է իրեն։

Պէտք է լինել դրախտի եւ ծնունդի մարդ, որպէս զի սրբազան գիշերվայ գաղտնիքը մեզ բացայայտ լինի—այն ժամանակ կըմբռնենք նաեւ թէ ինչու այս գիշեր հեռաւոր, անվերջ ընդարձակութեան մարդը երկրին եւ երջանկութիւնը բոլոր մարդկանց։ Ուրեմն թեման, սիրոյ, բարութեան եւ անձնութեան այն զգացմունքը, այն բոլոր մեղմութիւնը եւ գեղեցկութիւնը, որ այս գիշեր միլիոնաւոր սրտեր, գոնէ մի բանի ժամով, կեանքի առօրեայ եւ սովորական մակերեւոյթից բարձրացնելու եւ

կարող սակայն չը նկատել, որ Բազուի տագնապը առաջ բերեց մեր ժողովրդի գիւղական ազգաբնակչութեան մի մասի մէջ սթափում։ Նա նորից վերադարձաւ այն արտին, հողին, որ տարիներով բարձրիկ էր արել, վազելով Բազուի առասպելական ոսկու ետեւից։

Նոյն սթափումն նկատելի է եւ գաւառական իմացական տարրի մէջ. գաւառները, որ վերջին տարիներս դատարկվել էին իրանց ինտելիգենտ ոյժերից, այժմ տեսնում են քիչ քիչ այդ ոյժերի վերադարձը, անառակ որդու վերադարձը, որ, ի հարկէ, բարերար ազդեցութիւն կունենայ գաւառական ընդհանուր մտաւոր եւ բարոյական կեանքի վրա։

Հրահանգիչ եւ մեր երկրի առաջադիմութեան համար նշանաւոր երեւոյթ պէտք է համարել կուլիսանալ յօրեւանական ցուցահանդէսը։ Այդ ցուցահանդէսը յամենայն դէպս մի բան անհրաժեշտ կերպով ապացուցեց, եթէ Կովկասը մեծ առաջադիմութիւն չէ գործել երկրագործութեան եւ արդիւնաբերութեան մէջ, բայց ճանապարհն արդէն հարթված է եւ խրամատներ, լայն խրամատներ են բացվել այն պարսպի մէջ, որ մինչեւ այսօր կապել էր առաջագիտութեան առաջը. շատ ճիւղերն մէջ որոշ կատարելագործութիւններ կատարվել են եւ երկրի գիւղատնտեսական ու արդիւնաբերական զարգացման գործն ապահովված կարելի է համարել։

Ոչ պակաս հրահանգիչ էր եւ Ռուսաստանի հետ Վրաստանի միացման հարւելաբանակի տօնախմբութիւնը։ Այդ առիթով լոյս ընծայվեցին մի քանի հրատարակութիւններ, որոնք պարզ կերպով ցոյց տուեցին, թէ այդ միացումն անխուսափելի էր Վրաստանի նախկին թագաւորութեան մէջ տիրող կարգ ու կանոնների եւ ժողովրդի թշուառ վիճակի պատճառով։ Երկիրը թէ քաղաքականապէս, թէ տնտեսապէս եւ թէ ֆինանսապէս բոլորովին քայքայված էր. աղքատները, աւաղութիւն էր տիրում երկրում, չը կար կեանքի, գործի խաղաղ, կանոնաւոր կուլտուրայի եւ կեանքի զարգացման ապահովութիւն։ Բացի այդ ներքին պատճառներից, կային եւ արտաքին պատճառներ՝ այն ժամանակ գորեղ Պարսկաստանի եւ Թիւրքիայի գործած արշաւանքները եւ աւելումները։ Ի հարկէ, այդպիսի աննպաստ պայմանների մէջ խօսք անգամ չէր կարող լինել որ եւ է մտաւոր կամ կուլտուրական զարգացման մասին։

1901 թվ. ընթացքում լուծվեց եւ մի այլ հարց, որ վաղուց հերթական էր. 1894—96 թվերին Թիւրքիայում եղած կոտորածներից փախած մօտ 50,000 հայ գաղթականների հարցը։ Որքան էլ տեղական հայ ազգաբնակչութիւնը, երբայրականական եւ մարդասիրական զգացմունքներից զրոյթած, օգնում էր եւ պատուաբար թշուառ գաղթականներին, բայց այդպիսի մի անազնի եկուր տարրի վիճակը չէր կարող կառավարութեան հոգածութեան առարկայ չը մաքրելու է—ծնունդի երեխայի համար դառնում է կեանքի մի զգացմունք, մի մեծ, երեւանաւետ զգացում, որ ոչ թէ մի քանի ժամ, այլ շարունակ յարատեւում է ինքազգութեան, դրախտ—երկրի, լաւագոյն եւ կատարեալ մարդկութեան պատգամաբերութիւնը։ Նրան ոչ թէ ծննդեան մի առասպել է թւում, այլ նա հաստատ հաւատում է դրան եւ վստահ է, որ մեր բոլոր հին յոյսերը, մեր յաւիտեական տենչանքները գաղութաւորութեան նկատմամբ կատարվելու, իրականանալու են։

Խաղաղութիւն ամբողջ երկրին—հնչում են ծննդեան զանգալները։ Յաւիտեական կուլ—այսպէս են որոտում ամենօրեայ զանգերը։ Բայց ինչ է կուլը—հարցնում ենք մենք եւ չենք կարող որոշել այս խօսքը։ Մենք գիտակից ենք միայն մի տեսակ ընդդիմադրութեան զգացմունքի, որը պէտք է խորտակել եւ չէզոքացնել։ Անա սա հէնց նոյն զգացմունքը, նոյն գիտակցութիւնն է, որ արթնանում է մեր մէջ, երբ մենք հարցնում ենք՝ ինչ է մարմին, ինչ է նիւթ—ընդդիմադրութիւն ցոյց տուող մի բան։ Եւ այն գիտութիւնը, որ թելադրում է թէ կեանքը կուլ է, ուրիշ բան չէ, բայց եթէ մեր մարմնական գոյութեան ուսուցումը, այն ինչ խաղաղութեան բոլոր մտապատկերները սերտ եւ անուշելի կերպով կապված են, այսպէս կուլված, հոգու հետ։ Խաղաղութիւն թագաւորութիւն, Աստուծո թագաւորութիւն—սա հոգու թագաւորութիւնն է։ Նիւթական ստացվածքների եւ զանգերի տարբերութիւնը հոգեկանից կայանում է նրանում, որ մէկը սահմանափակ անցաւոր եւ առ-ժամանակեայ է, մինչդեռ միւսը՝ անվերջ եւ անանցանելի։ Եթէ մէկի անունով կուլ է բռնկվում, երկրորդի անունով ընդհակառակն

դառնալ, մասնաւոր որ այդ եկեղեցիներն հող տալ անկարելի էր։ Այդ պատճառով հէնց սկզբից կառավարութիւնը ամեն ջանք գործ դրեց, որ Թիւրքիան նորից յետ ընդունէ գաղթականներին եւ վերադարձնէ նրանց իրանց հողերը։ Այդ ջանքերը չը պատվեցին ավորութեամբ, ուստի եւ կառավարութիւնը գաղթականների վիճակը վերջնականապէս որոշելու համար հրատարակեց Բարձրագոյն մի հրաման, որով իրաւունք է տրվում նրանց ապրել կայսրութեան մէջ, ընդունելով ռուսահայատակութիւն, զրկելով գիւղացի, եթէ միայն գիւղական համայնքները կընդունեն նրանց իրանց մէջ, կամ մէջնան՝ քաղաքներում եւ ենթարկվելով զինուորագործութեան օրէնքներին։ Իրանց հայրենիք դրնալ ցանկացողներին կառավարութիւնը ցոյց կը տալ հարկաւոր աջակցութիւն։ Այդպիսով գաղթականների վիճակը որոշվում է։

Երկրի տնտեսական վիճակի զարգացման մի կարեւոր գործն եւս երեւան եկաւ 1901 թվ. ընթացքում—Ալեքսանդրօպօլ—Երեւանեան երկաթուղու գծի բացումը։ Այդ նոր գիծը, անկասկած, մեծ դեր ունի խաղալու երկրի ընդհանուր արդիւնաբերական եւ առեւտրական գործի զարգացման մէջ, մասնաւոր երբ աւարտվի նրա շարունակութիւնը մինչեւ Զուլֆա, պարսկ օսանմանաղուլը եւ այդպիսով Պարսկաստանի հիւսիսային մասը, Ատրպատական նահանգը, կապվի Կովկասի հետ։

Միւթարական երեւոյթ ենք համարում եւ այն, որ, վերջապէս, 1901 թվ. վճարվեց ազգային երախտագիտութեան մի պարտք, այն է Ռ. Պատկանեան բանաստեղծի մահաբանի կանգնումը, թէ եւ նա տեղի ունեցաւ այնպիսի պայմաններում, որոնք ապացուցանում են, թէ հայ ժողովրդի մէջ մեծ մարդկանց գնահատելու զգացումը դեռ շատ քիչ է զարգացած։ Այժմ հրապարակի վրա է դրված Մ. Նալբանդեանի արձան կանգնեցնելու հարցը։

Չենք կարող անուշադիր թողնել երկու նշանաւոր յօրեւանք—Միւթարեան ուխտի երկհարւարմայ գոյութեան յօրեւանք, որ անդառնալի կերպով ապացուցեց, թէ որքան խոր արմատ է գցել այդ միաբանութեան օգտակար եւ փառաւոր գործունէութիւնը հայ ժողովրդի սրտի զգացմունքի մէջ։ Եւ թէ այսօր հայ ժողովրդի համար կրօնական եւ դաւանաբանական խորութեան հարցը այլ եւս գոյութիւն չունի։ Այդ համազգային յօրեւանքին, զգալիաբար, հետեւեց հայոց նահապետ հայր Դեանդ Ալիշանի, մեծ գիտնականի եւ բանաստեղծի անփոխարինելի եւ ցաւալի կորուստը, ցաւալի մանաւանդ, որ նրա առիթով երեւան եկաւ եւ լուսաւորական հոգեւորականութեան մի մասի աններդաժիտ եւ հակաքրիստոնէական վարմունքը, բայց նոյն իսկ մեծ ծերունու այդ մահը վերջնականապէս հաստատեց, թէ որքան վտանգաւոր է շատ անգամ խաղալ ժողովրդի նուիրական զգացմունքի հետ։

Կուլի ոչ մի տեղիք չը կայ, որովհետեւ դրանք (հոգեկան ստացվածքներ) նմանում են ճակատագրի բաժանում, որից ամեն մէկը խմել կարող է, բայց որից եւ ոչ մի կաթիլ չէ նուաղի։

Երկրորդ, երկրոր ժամանակներից է վեր մենք լսում ենք ծննդեան զանգալները եւ ականջ դնում խաղաղութեան թագաւորութեան պատգամին։ Բայց այս թագաւորութիւնը չը բացվեց մեզ համար, այդ պատճառով յուսանաւորված ձեռները ծոցներս ենք դնում եւ յօգնած, գուրկ ակնկալութիւնից հառաչում—դա երբեք զաւու չէ, մենք երբեք չենք հանգչելու նրա լոյսերի տակ, այս բոլորը մի առասպել է, մի երազ։

Սակայն այս թագաւորութիւնը չէ գալու միայն այն մարդու համար, որ միայն իր վերջնականութեանն է հաւատում, որ մահվան վրա հաննելով իրան արդէն բոլորովին ոչնչացած է համարում եւ որը փարվում է միայն նիւթական ստացվածքների, զանգերի իսկ եթէ հոգու մարդը մեղանում արթուն է եւ մեծ, այն փարված հարուստը, որ նուրբ ի կարող է, առանց սակայն մի բան կորցնելու եւ աղքատ անաղու, եթէ կենդանի է մեղանում իր անվերջութեանը գիտակցող Աստուծոյ մարդը—այն ժամանակ ինչպէս ձեռնալայն գիշերը դարձն է բերում, այնպէս էլ, կարծես, մի կախարհական հարուստով դրախտի եւ ծնունդի առասպելական աշխարհը փթիւմ է մեր շուրջը իրեն իրականութիւն եւ հնարաւոր է դառնում այն, ինչ որ մի զգալական պատմանքով անհար չէմք համարում։

Գերմ. Թարգմ. Վ. Նալբանդեան

Իսկ Յովհաննէս Լազարեանի, Լազարեան ճե-
մարանի փառաւոր հիմնադրի մահման հարեւո-
րանայ յօրինանքի յիշատակի տօնակոթողութիւնը
մի անգամ եւս թարմացրեց մեր յիշողութեան
մէջ, թէ Պարսկաստանի խորքերից դուրս եկած
այդ մեծ հայը եւ քաղաքացին որքան արժանի
է մեր երախտագիտութեան...

Հ. Առաքելեան

ԱՐԱՅ ԹԱՏՐՈՆ

Չորեքշաբթի, յունվարի 2-ին, վրաց դերա-
մանական խումբը տօնեց վրաց թատրոնի հիմ-
նադրութեան տարեդարձը:

Ինչպէս յայտնի է, առաջին վրացերէն ներ-
կայացումը կայացել է 1850 թւի յունվարի
2-ին, իշխան Վորոնցովի ժամանակ: Այդ ժամա-
նակ առաջ եկան մի քանի խոշոր դրամատուրգ-
ներ, ինչպէս Գիորգի Էրիսթով, Ջուրաբ Անտո-
նով (գործիչի հայ), որոնք վրաց թատրոնական
գրականութեանը հիմք դրին: Այս հեղինակ-
ների գրութեանց մի քանի կտոր կրկնվում
են ամէն տարի յօրինանքի օրը:

Այս դրամատուրգները իրանց կօմիդիաների
մէջ բեմ են հանում յիսունական թւականների
երկու հարեւան, այն է հայ եւ վրաց ազգու-
թիւնների բարձր ու վարձը, նիստ ու կացը, մի-
կողմից հեղինակները ծաղրի առարկայ են դարձ-
նում վրաց իշխանների չափաւորութիւնը եւ նիւ-
թական անակոթութիւնը, իսկ միւս կողմից հայ
վաճառականի փողախլութիւնը եւ վրաց լե-
զուի աղաւաղումը: Սրանուհի է այս կօմիդիա-
ների ամբողջ իւրօրը:

Այս տարի վրաց խումբը նորոգեց Չ. Անտո-
նովի «Արեւի խաւարումը» 3 գործողութեանը
կօմիդիան: Այս կօմիդիայի մէջ հեղինակը ծաղ-
րում է ժողովրդական նախապաշարմունքները
արեւի խաւարում մտնելիս Մ. Օֆիցերի սիրա-
հարկած է մի հայ վաճառականի ազգկայ վրա,
բայց հայրը հակառակ է այս ամուսնութեանը,
որովհետեւ ցանկանում է իր ազգկան տալ վա-
ճառականի: Երբ ժողովուրդը հաւաքված է
հրապարակի վրա եւ դիտում է արեւի խաւա-
րումը, Օֆիցերը օգտվում է այս դէպքից եւ
փախցնում է ազգկան նրա հետ պակսվելու:
Ծնողները կարծելով թէ վիշապներ թողրին
ազգկան, սուգ ու չիւան են անում, բայց վեր-
ջը յայտնվում է եղբայրները եւ սուգը փոխ-
վում է ուրախութեան:

Խումբը պէտք խաղաց բաւարար կերպով:
Ներկայացման վերջը կայացաւ ազգութեզ. ամպերի
միջից երեւում էին հանդուցեալ հեղինակները,
որոնք ծառայութիւն են մատուցել վրաց թատ-
րոնական գրականութեանը. սրանք էին՝ Գիոր-
գի Էրիսթով, Ջուրաբ Անտոնով, Դաւիթ Էրես-
թով, Ռ. Էլիսթով, Վանո Մաչաթէի (Շէքսպիրի
վարդմանիքը), Ալ. Կուրելի եւ Դիմիտրի Կի-
սիլանի: Սրանց ամեն մէկի երեւալըն ալիս
դերասան Մէսիս կարգում էր նրանց մատու-
ցած ծառայութեանը վայելուչ ոտանաւորներ,
իսկ երաժշտութիւնը նուագում էր:

Թատրոնում բաւական հասարակութիւն կար
Thaleia

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Դեկտեմբերի 31-ին

Ճիշդ է, որ մենք, հայերս, դիտենք «լուս-
թաղը», արժանաւայելի պատու, յարգանք մա-
տուցանել «պախմանի» սկզբին, դամբարանի
շուրջը: Այո, ճիշդ է: Ճիշդ է, ակնհայտ է եւ այն
զուան իրողութիւնը, որ մեր արտայայտած
«յարգանքն» ու «պատիւը» հէնց զրանով էլ
անմասնափակվում են... Մեր ամենազգայի, ա-
մենամեծ կորուստները մեզանից միմիայն այդ-
պիսի «պատիւներ» են ժառանգել: Յուսկացա-
կան հեռագիրներով, պատկերով, հազար ու մի
տեսակ ալ ու վաշերով եւ հոգեհանգիստներով
ենք մեր խղճը հանգստացնում, մեր պարտքը
կատարած համարում դէպի հասարակական ան-
բեծ գործիչը, դէպի անզուգական բանաստեղ-
ծը, դէպի տաղանդաւոր եւ գաղափարական
հեղինակը, հրապարակաւ օր... Բայց ական
կիստ օրհորութիւն, պարտաճանաչութեան
զօրեղ արտայայտութիւն, ապա յաւիտենական
անտարբերութիւն, անհոգութիւն, մինչեւ իսկ
նուազութիւն... Իրողութիւնը այդ է ապա-
քուցանում ալ եւ վրայում հայկական պղտոր
կանգի տուր էջերը...

Անս հէջ այս տեսակէտից ուրախալի պէտք
է համարելայն երևոյթը, որ տեղի է ունե-
նում այսեղ անդուցեալ Աստուածատուր
կաճկածան յիշատակի վերաբերեալ: Երէկ,
ամէն 30-ր, տեղիս Մարգարիտական ընկե-
րութեան արշուժեան նախաձեռնութեամբ

գրադարանի դահլիճում հոգեհանգիստ կատար-
վեց հանգուցեալի համար: Ինչպէս արդէն
յայտնի է, հանգուցեալ Կաճկածանը ընկերու-
թեան միակ պատուաւոր անդամն է, որ ընտր-
վել է ընկերութեան մատուցած իր ծառայու-
թեան համար եւ ոչ թէ դրամական նուիրա-
տութեան համար, ինչպէս, սովորաբար, ընտր-
վում են:

Պատարագից յետոյ երկու սեռի ստուար մի
բազմութիւն պատուել էր իր ներկայութեամբ
հոգեհանգիստը: Այդտեղ, հոգեհանգիստից յե-
տոյ, ցանկութիւն յայտնվեց հանգուցեալի յի-
շատակը յաւերժացնել բարենպաստ կերպով:
Երեւաց, որ գործը արդէն ձեռնարկված է եւ
ժողովարարութիւնը ինքնաբերաբար սկսված:
Հաւանականօրէն կը ժողովվի անհրաժեշտ հա-
մարված գումարը, որով կարելի պիտի լինի
արժանաւայելի կերպով կատարած տեսնել ը-
տրիս ցանկութիւնը:

Աւելի քան պէտք է յուսալ, որ տեղական
հայ ինտելիգենցիան, հայ երիտասարդութիւնը,
որ այն աստիճան համակրանքով էր վերաբեր-
վում հանգուցեալին, սրբազան պարտք պիտի
համարէ նպաստելու, աշակցելու գործի աջո-
ղութեան, եւ ուսմ արտին աւելի մօտ պիտի
համարվի այդ գործը, եթէ ոչ նոյն այդ ինտե-
լիգենցիային, երիտասարդութեան, որի պատ-
ւաւոր ներկայացուցիչն է եղել հանգուցեալը,
որի մշտական պատգամաւորն է հանդիսացել
երկար տարիների ընթացքում...

Յունվարի 12-ին տեղի կունենայ սովորա-
կան «հայկական երեկոյթը» յօգուտ Մարգարի-
տական ընկերութեան գրադարանի: Երեկոյթին
մասնակցելու համար հրաւիրված է պ. Կարա-
Մուրզա, որ պատրաստում է 60—70 հոգուց
բաղկացած երգչիկ խումբ: Նոյնպէս հրաւիր-
ված են նոյն նպատակի համար պ. Նալբան-
դեան եւ ուրիշները:

Դեկտեմբերի 29-ին նաւթարդիւնաբերողների
ժողովը, համաձայն Մարգարիտական ընկերու-
թեան միջնորդութեան, որոշեց երեք հազար
րուբլի յատկացնել նոյն ընկերութեան նորա-
բաց «Աշխատանքի տան» օգտին, որը չօգտիւն
կերպով լայն ծաւալ է ստանում եւ օրէցօր ա-
ւելի եւ աւելի անգործ աշխատաւորներ պա-
տասարում: Մտադրութիւն կայ մօտիկ ապա-
գայում հանդիսաւոր կերպով օրհնել այդ տունը
եւ հասարակութեան ծանօթացնել գործի իս-
կական գրութեան հետ:

Ն. Դաւթեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յունվարի 2-ին

Կիրակի օր, դեկտեմբերի 30-ին, դարձաւ չը
կայացաւ Վանքի եկեղեցու ծխականների ժողո-
վը երեքփոխի հաշիւները գնելու համար: Սա
հիմնարկը անգամն է, որ ժողով չէ կայանում:
Ուստի եւ հրապարակով առաջարկում են, որ
պէս ծխական, իշխալ եկեղեցու աւագ քահա-
նայ Սարգսեանին, տպագրութեամբ լոյս հանել
երեքփոխի 14 տարվայ եկեղեցական հա-
շիւները, ինչպէս այդ անում են Թիֆլիսի միւս
եկեղեցիների երեքփոխները, որպէս զի տեղի
չունենան տարակուսանքներ եւ կասկածներ:

Վանքի ծխական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է 1 1/2
թերթից:

«Մշակի» հետեւեալ համարը, տօների պատ-
ճառով, լոյս կը տեսնի չորեքշաբթի, յունվարի
9-ին, իսկ այնուհետեւ իրանստան, իր պոլի-
րական կարգով:

Երէկ, յունվարի 4-ին, Բագուի առաւօտեան
գնացքով ժամը 10-ին, Թիֆլիս ժամանեց Վրաս-
տանի նոր էկզարխ արքեպիսկոպոս Ալէքսի:
Էկզարխին դիմաւորելու եւ կովկասի պ. Կառա-
վարչապետի կողմից ողջունելու համար ընդ
առաջ էր գնացել կառավարչապետի դիմաւորան
գործակար պետական խորհրդական Օսէցկի:
Թիֆլիսում, կայարանում, էկզարխին դիմաւո-
րեցին Թիֆլիսի նահանգապետը, Թիֆլիսի կօ-
միսարանը, ազնուականութեան նահանգական
պարագլուխը, քաղաքապետի պաշտօնակատարը
եւ ոստիկանապետը: Կայարանից էկզարխը կառ-
քով եկաւ Սիօնի տաճարը, կապի առաջից
գնում էր քաղաքականապետ, իսկ իրեւ պատուա-
ւոր պահակ կառքի առաջից եւ ետեւից գնում
էին ժամդարմաների մի խումբ եւ կառավարչա-
պետի պահակախումբը: Բոլոր թէ գնաւորական
եւ թէ քաղաքացիական բարձրաստիճան պաշ-
տօնանները առաջից, որովհետ կարգով հա-
ւաքվել էին Սիօնի տաճարը: Տաճարի մօտ շար-

ված էին եւ համբարները իրանց դրօշակներով:
Ժամը 11-ին էկզարխը հասաւ Սիօնի տաճարը,
ուր համառօտ աղօթքից յետոյ, թափորով գնաց
էկզարխի տնային եկեղեցին, ապա մտաւ էկ-
զարխի տան դահլիճը, ուր նահանգապետը եւ
կօմիսարանը ներկայացրին նորին սրբազնու-
թեանը քաղաքացիական եւ զինուորական պաշտօ-
նաներին: Վաղը, յունվարի 6-ին, էկզարխ
Ալէքսի հանդիսաւոր թափորով պէտք է կա-
տարէ մկրտութիւն եւ յօղանանի հանդէսը:

Չորեքշաբթի, յունվարի 3-ին, Անդրկովկա-
սեան երկաթուղու կառավարիչ Է. Վ. Վէրէնէսկի
վրա մի անյայտ չարագործ գնդակ արձակեց այն
ժամանակ, երբ Վէրէնէսկի ման էր գալիս իր
բնակարանի դահլիճում: Է. Վէրէնէսկի վէրք է
ստացել ձախ թոքին: Ենթադրում են, որ գնդա-
կը արձակված է Վէրէնէսկի բնակարանի հան-
դիպակցը նոր շինութիւնից: Չարագործը դեռ
եւս չէ գտնված:

Չորեքշաբթի, յունվարի 3-ին, Թիֆլիսի ար-
հեստաւորաց ուսումնարանում տեղի ունեցաւ
աշակերտական ներկայացում: Սաղացին երեք
կօմիդիաներ՝ բաղկացած միմիայն գործողութիւ-
նից, հայերէն, վրացերէն եւ ռուսերէն լեզու-
ներով: Ներկայացումից յետոյ զարուի աշա-
կերտները կարգացին ուսումնարաններ եւ առակ-
ներ, ապա վաղից տօնածառ, որի ժամանակ
աշակերտներին բաժանվեցին ընծաներ: Աշա-
կերտական ներկայացում-երկույթը դրանք էր
բաղմամբ հասարակութիւն, մեծ մասամբ ա-
շակերտների ծնողներից եւ ազգականներից:
Ներկայացմանը ներկայ էին Թիֆլիսի քաղա-
քապետի պաշտօնակատարը, ուսարկայի անդամ-
ները եւ կովկասեան ուսումնարանական շրջանի
վարչութեան ներկայացուցիչները:

Մեզ ինչորում են տպագրել հետեւեալը:
«1901 թ. դեկտեմբերի 16-ին արտիստիքական
ընկերութեան դահլիճում տեղի ունեցած յօ-
գուտ Հայուհեաց Բարեգործ. ընկերութեան պա-
րահանդէսից ստացվել է հետեւեալ արդիւնքը:
մուտք. տոմարակներից—1687 ռ. 75 կ., բու-
ֆէտից—226 ռ. 5 կ., պրէմիաներից—490 ռ.,
ընդամենը 2403 ռ. 30 կ., մ. յ. ա. Ս. արտիստիքա-
կան ընկերութեան՝ երաժշտութեան եւ կախա-
րանի հետ միասին—355 ռ., տպարանին եւ
խմբագրութիւններին՝ 52 ռ. 25 կ., կօտիլոնի
զարդարանքներ, ծաղիկներ, կօնֆէտի եւ զըն-
չունների հազուադէպ վարձ—46 ռ. 30 կ., մար-
կաներ—89 ռ. 80 կ., ցիտրուսի վրա նուագործնե-
րին 25 ռ., ընդամենը 568 ռ. 35 կ.: Չուստ ար-
դիւնք մնացել է 1835 ռ. 65 կ. բացի սրանից
ստանալիք կալ դարձեալ 132 տոմարակ համար:
Թիֆլիսի Հայուհեաց բարեգործական ընկերու-
թիւնը յայտնում է իր խորին նորհակալութիւնը
պ. պ. Բուտկովիչին, Դ. Մ. Փոլոկինսկիին, Մ. Օ.
Պ. Դին, Տ. Նալբանդեանին եւ այն բոլոր անձանց,
որոնք մասնակցեցին թէ համերգին եւ թէ խմբա-
կան երգերին, որով եւ նպաստեցին երկույթի
աջողութեանը. նմանապէս բուֆէտի մօտ ծախս
անող տիկնաններին, Մուսիին՝ ընծայած քաղցրե-
ղէնի համար, «Մշակի» խմբագրութեան՝ յայտա-
րարութիւնը ձրի, իսկ միւս խմբագրութիւն-
ներին՝ պակաս գնով տպագրելու համարը:

Հինգշաբթի, յունվարի 3-ին, ուսուցչաց դրա-
մատիքական խումբը տիկին Վազլիսայի բէ-
նէֆիսին ներկայացրեց Սոււփօրինի «Ճատեա-
նա Բէպիսա» Պիէտան մասամբ տէնդէն-
ցիօզ, անտիսեմիտական հակութեան ունի,
իսկ մասամբ չօչափում է մի հետաքրքիր խն-
դիր—բեմին նուիրված արուեստագետի եւ
կիանքի մէջ եղած յարաբերութիւնը, դերասա-
նական կոչման եւ մարդկային ներքին, հոգե-
կան պահանջների յախտնական ընդհարումը:
Տիկին Վազլիսան Տատուրի Բէպիսայի դերը
սկզբից մինչեւ վերջ աջող կերպով տարաւ:
միայն չորրորդ գործողութեան մէջ նկատելի
էին էֆֆէկտային չափազանցութիւններ: Տի-
կինը վարձատրվեց բուն ծափահարութիւննե-
րով եւ մի քանի թանգաղիք ընծաներով: Ծոյ-
ցերը բեմի վրա նոյն իսկ տնային կերպարանք
ստացան: Միւս դերակատարներից լաւ էր պ.
Պետրիպի Սարինին, այն ինչ պ. Եսկովիչի
Աղուէլը թոյլ էր: Պ. Սմէլիցկու Չօնէն-
չտան կարելի էր բաւարար համարել:

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի
26-ին Լադարեան ճեմարանում կայացաւ երա-
ժշտական-կոմպոզիցիոն երկույթ՝ յօգուտ նոյն
ճեմարանի նախկին սաների: Ժողովուրդը շատ
կար, նորհիւ այն հանգամանքի, որ երեկոյ-
թին մասնակցում էր յայտնի արտիստ պ. Սօ-
բիսով, եւ մասամբ այն պատճառով, որ

օր առաջ ուսու թերթերի մէջ ապագա էր,
թէ այս անգամ երեկոյթը եղածներից աւե-
լի հետաքրքրական պիտի լինի: Այդ խոստումը
իրագործվեց: Երեկոյթը սկսվեց ճեմարանի սա-
ներից կազմված խմբի «Մայր Արաքսի» երգով,
որը շատ լաւ երգվեց, յետոյ երգվեց «Ելը որ
բացվին», որի մէջ ճեմարանի սան Միքայէլեան
երգեց սօղ. պէտք է ասել, որ Միքայէլեանի
ձայնը լաւ ապագայ է խոստանում: Նա մեղծ
ու բարձր է եւ ականջի համար շատ դուրեկան:
Խումբը երգեց եւ «Ջարթիր սիրտ իմ» երգը,
որ շատ աջող էր: Պ. Բօգոլովիչի դաշնամուրի
վրա շատ լաւ անեց մի քանի արիաներ: Սօբի-
սովի դուրս գալը երկար ծափահարութիւնների
պատճառ դարձաւ: Նա իր սիրուն ձայնով եր-
գեց լուսնաները եւ հանդիսականների անվերջ
ծափերին 5 անգամ դուրս եկաւ ու երգեց ու-
րիչ զանազան կտորներ: Երգչի ձայնի եւ երգի
մասին բան ասելը անկողի է, քանի որ ար-
տիստը Մեծ թատրոնի աստղն է կազմում:
Չուստի վրա նուագող պ. Պիէտա շատ լաւ
ցոյց տուեց իր ունեցած չորհրդի եւ տաղանդի
ոյժը: Ծափահարութիւններին քանիցս անգամ
կրկնեց: Երգչուհի Սոբիսկովայի երգած բօ-
մանները նոյնպէս աջող էին: Շատ լաւ տալա-
ւորութիւն թողեց եւ երգչի Սպերանսկու (բաա)
երգը, որը ծափերին երգեց եւ «Ճատեալից»
շատ հիմնալի մի կտոր: Կոնցերտային բաժինը
վերջացաւ երգչիկ խմբի «Գիւրուս-Ջան», «Ան-
փոյթ նաւաստի» եւ «Չէլսիւնցիներ» երգե-
րով ժամի 11 1/2-ին, որից յետոյ սկսվեցին եւ-
րօպական պարերը, որոնք տեւեցին մինչեւ
ժամը 3-ը: Երեկոյթը ընդհանրապէս աջող ան-
ցաւ»:

ՄՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Թիֆլիսի նահան-
գապետ անկանոն է ճանաչել Վարդան Ենիօ-
թիփեանի ընտրութիւնը քաղաքապետի պաշտօ-
նում, ուստի ընտրութիւնները Ենիօթիփեանի
վերաբերմամբ բեկանել է: Ինչպէս հաղորդել
էինք, սեպտեմբերի 4-ին, ընտրվեցին Վ. Ենի-
օթիփեան եւ Ն. Սիւրիանեան, որը մոմապա-
հետի կառավարիչն էր»:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 28-ին,
Կարսի հաշտարար գաւառի մօտ քննվում էր
կաղզուանի եկեղեցու շինութեան վերակացու
պ. Մ. Ալլահվերդեանի դատը կաղզուանի յայտ-
նի հարուստ եւ բարեգործ Ջաքար աղա Ջան-
փօլադեանի դէմ: Ջանփօլադեան մեղադրվում
էր նրա համար, որ պ. Մ. Ալլահվերդեանի հո-
գի ու հաւատ հայհոյել էր: Ծոյց տրված բազ-
մաթիւ վկաններից ներկայ էր միայն մէկը: Ա-
ռաջարկած հաշտութիւնը չընդունվելով պ. Մ.
Ալլահվերդեանի կողմից, դատաւորը բաւակա-
նացաւ միայն մի վկայի տուած ցուցմունքնե-
րով ու դատաւարտեց Ջաքար աղա Ջանփօլա-
դեանին 7 օրվայ բանտարկութեան»:

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Հ. Ալիշանի
համակրողները ամեն ջանք գործ են դնում, որ
հայոց եկեղեցում հոգեհանգիստ կատարվի նրա
յիշատակին. սակայն աւագ քահանայ Պօպօլեանի
նեղ կրօնական հայեացքը չեն կարողանում կոտ-
րել: Թեմիս եպիսկոպոսից նոյնպէս հեռադիր է
ստացվել, որ հոգեհանգիստ չը կատարեն»:

ՄՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Եղանակները գար-
նանային են: Ձիւն դեռ չէ եկել. մի քանի տեղ
ծաղիկը են նշնանները»:

ԹԷՂՐԱՆԻՑ մեզ գրում են. «Անցեալ չորաթ
Եւրօպայից վերադառնալով անցաւ դէպի Թէհ-
րան Պարսկաստանի անգլիական բանկերի դի-
րեկտօր Բօրիսոն»:

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Մենչպէս յայտնի
է, տեղիս հայ գաղութը՝ Յ. Լազարեանի մահման
հարեւրամայ յիշատակը յարգելու համար, պէտք
է բաց անէ այստեղ տարրական ուսումնարան:
Ծաւելով պէտք է նկատենք, որ այդ գործը շատ
զանգաղ է առաջ դնում: Հայերի մէջ երեւացին
այնպիսի փոքրորդ անձինք, որոնք ուզում են
շեւտել այդ համակրելի գործին եւ խանգարում
են աջողութեամբ»:

ԴԵՐԲԵՆԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի
30-ին այստեղ թաղեցին տեղացի հարուստ
Իսահակ Բարապետեան. թաղմանը հրաւիրված էր
եւ Բագուի քահանայ Եղիշ: Գեղարմանը եկեղե-
ցում Եղիշը քահանան մի քարոզ անց եւ ապա
յայտնեց հասարակութեան, որ հանդուցեալ
կենդանութեան ժամանակ անկողիք եղաւ իր
հարստութիւնից մաս տալ բարենպաստակ հա-
տատութիւններին, ուստի նրա այրին այժմ
նուիրում է 1000 ռուբլի այստեղի ուսուցչ

հետ, չէ կարող զօրեղ եւ աննպաստ պարզեցութիւն չը գործել ժողովրդական տնտեսութեան վրա Ռուսաստանում, նրա ընդհանուր ամբողջութեան վրա, ի միջի այլոց եւ պետական ֆինանսների վրա: Այդ պատճառով առանձին ուշադրութեան արժանի են վերեւ բերած փաստերը 1902 թվի պետական հաշուկցի կատարելապէս բաւարար կազմութեան եւ անցեալ տարւոյ նախահաշւային ենթադրութիւնները գերազանց կերպով կատարելու մասին: Դժուար ժամանակներում այդպիսի հետեւեալներին համեմելը Ռուսաստանում պետական տնտեսութեան կայուն վիճակի աւելի լաւ ապացոյց է, քան ամենապիտուաւոր աղոյժութիւնները ընդհանուր բարօրութեան ժամանակն հաշուկցի մէջ բերված աղիւսակից երեւում է, որ դրամական չրջանառութիւնը կատարելապէս ամուր է, որ չրջանառութեան մէջ գտնվող իւրաքանչիւր թղթադրամ բուլբին ապահովված է համարեա մէկ ու կէս ոսկէ բուլբով, եւ որ երկրի ոսկու ընդհանուր պաշարը վերջին տարում մի փոքր աճել է: Այդ աճումը մասամբ կախված է անցեալ տարի կատարված կիւբիտային օպերացիաներից, բայց չէ կարելի, միւս կողմից, չը նկատել, որ մի եւ նոյն ժամանակ, կարճաժամանակեայ պարտաւ թղթիւններին կարբերութիւնը թղթիւնների շարունակողը կրճատման ազդեցութեան տակ միւր այդ տեսակի պարտքը արտասահմանում նշանաւոր չափով պակասեց: Այդպիսով, դժուար ժամանակները չը խախտեցին պետական ֆինանսները եւ դրամական չրջանառութիւնը: Անհամեմատ աւելի զօրեղ ներգործութիւն ունեցաւ տագնապի եւ անբերրիութիւնների ազդեցութիւնը արդեւաբերութեան մի քանի ճիւղերի վրա. վերջին տասնամիակում արդեւաբերութիւնը արագ եւ անընդհատ աճում էր. դա հետեւեալը էր այն քանի, որ շարունակ գործարկվում էր հովանաւորող քաղաքականութիւնը եւ միժմնում էր արդիւնների պահանջը ազդեցողութեան եւ կառավարութեան կողմից: Դրամական միջոցների առատութիւնը երկրի ներքում եւ արտասահմանեան դրամադրի հոսանքը դիւրացրին նոր գործերի կազմակերպութիւնը: Այդ նպաստաւոր պայմանների զուգարկութիւնից արդեւաբերութիւնը օգուտ քաղեց շատ լայն կերպով իր զարգացման համար. նշանաւոր կերպով աւելացաւ գործարանների եւ գործատների թիւը, սկսվեցին արդիւնագործութիւնների նոր ճիւղեր, ընդարձակվեցին նախկին ձեռնարկութիւնները: Սակայն արդիւնահանութեան կաշտնաւոր աճմամբ միացաւ սաստիկ սպէկուլիւր, որն, չը նայելով այն քանի, որ ֆինանսները միմիայնութիւնը շատ անգամ նախապզգուշացնում էր անխուսափելի տխուր հետեւեալների մասին: Սխալ հաշւած, թոյլ, կասկատ կառավարվող գործերը, ի հարկէ պէտք է կամաց կամաց անկման հասնէին բայց դրամական տագնապները չտապեցրին գործի ելքը եւ սուր ընաւորութիւն տուեցին նրան, իսկ թոյլ ձեռնարկութիւնների դժուարութիւնները առանց ազդեցողութեան չը մնացին ամուր եւ կենսունակ գործերի դրութեան վրա եւս: Գոխանակ աստիճանաբար ցածրանալու, մի քանի ապրանքների գները արագ էլ խիստ կերպով ընկան: Գների այդ զգալի անկումը եւ մի քանի ձեռնարկութիւնների ներկիճակը չափազանց ծանր ազդեցութիւն ունեցւ շատ մասնաւոր անձանց սեփականութեան դրութեան վրա: Ժողովրդական տնտեսութեան վրա եւս այդ դժուարութիւնները նոյնպէս աննպաստ ներգործութիւն են անում, գլխաւորապէս իր սուր արտաշարկութեան պատճառով, բայց այդ ներգործութիւնը ժամանակաւոր է, իսկ ինչուի՞նչ արտաքինների էջմանաւոր չափաւոր ազդեցողութեան մասապի համար եւ դրամական է երկրի արտաբորող ոյժերի ապագայ զարգացման համար: Ընկած գներին արդեւաբերական ձեռնարկութիւնները կամաց կամաց կը յարմարվեն, իսկ աւելի էջման արդիւնների աճում պահանջը արդիւնաբերական նոր ոգեւորութիւն կառաջացնէ: Մեր հովանաւորող քաղաքականութեան նպատակն էր էջմանացնել արդիւնբերութեան առարկաների գները, եւ այդ պատճառով անհետեւողական կը լինէր որ եւ է ընդհանուր միջոցներ ձեռք առնել գների ոչ-արդիւնաբերական բարձրացման համար արդիւնաբերութեան այն ճիւղերի ապրանքների համար, որոնք ժամանակաւոր դժուարութիւններ են կրում: Այդ դժուարութիւնների մէջ, որքան էլ նրանք մարդ լինեն առանձին ձեռնարկութիւնների համար, չէ կարելի տեսնել որ եւ է վտանգ ամբողջ ռուսական արդիւնաբերութեան համար եւ մինչեւ անգամ այն արդիւնահանութիւնները